

### ՅԵՄՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

#### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

##### ՀԻՄՆԱՐԿԷՐ ՅՈՊԴԷԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Կիրակի, 5 Սեպտ. ի առաւտուն, Ս. Պատրիարքը կանուխ մեկնեցաւ Յոպպէ, ընկերակցութեամբ Տնօրէն Ժողովոյ անդամներէն Տ. Տիրան, Տ. Սիրոն և Տ. Սերովբէ, և Յոպպէի նախորդ Տեսուչներէն Տ. Գէորգ և Տ. Ներսէս վարդապետաց: Ժամանեց նախքան Ս. Պատարագը, որու միջոցին քարոզեց օրումն հանդիսութեան առթիւ, ի ներկայութեան խումն Ժողովուրդի Ս. Պատարագէն յետոյ, ճշինող էիցս համայնիցն հոգևոր երգով կազմուեցաւ թափօր, և վանատան սրահին մէջ կարճ աղագործ մը վերջ, ամբողջ ժողովուրդը, արք և կանայք, մեծք և փոքրեր, հետևակ, համախումբ, գլխաւորութեամբ Ս. Պատրիարք Հօր և ինը վարդապետաց, կէս ժամ գնացքով, ամբողջ Յոպպէաբնակ ժողովուրդին հետաքրքիր նայուածքին առջևէն, հասաւ հին գերեզմանատան վայրը, ուր արդէն քանի մը շարքաբնակէ ի վեր գրեալն էին ամբողջ շէնքօրն հիմերը: Հան, պատշաճ Ս. Գրական ընթերցումներէ, շարականներէ և ազօթքներէ վերջ, Ս. Պատրիարքը՝ կարգաւ տայէ վերջ՝ թողել առաւ յիշատակարան մագաղաթը սրուակի մը մէջ. ապա շաղախեց անկիւնաքար մեծ վէժը և օրհնելեցան շէնքին շորս կողմերը: Մատաղի զենուճիմն միջոցին, Ս. Պատրիարք Հայրը անուանակոչեց դպրօցը՝ «Ս. Գլխագրի վարժարան Ս. Աթոռոյ»: Չափ չունէր օղևորութիւնը, զոր համօրէն ժողովուրդը կ'արտայայտէր մեծ եռանդով: Ըստ նախահաշուեալ ծրագրի, շէնքին համար վանքը առամագրած է 4300 Պող. Ոսկի, պիտի աւարտի ի վերջ գալ Յունուարի:

Կէսօր վերջ, Յոպպէի Տեսուչ Տ. Հայկազուն վրդ. ի կարգապաշտութեամբ, թէյասեղանի շուրջ խմբուճ մը տեղի առնեցաւ քաղաքին ճշերուգալիճ՝ Գերմանական պանդոկին մէջ: Ներկայ էին Հսգեշնորհ վարդապետները և քառասունի չափ յարգելի ազգայիններ: Ուրախ արա-

մադրութեան մէջ խօսեցաւ Ս. Պատրիարք Հայրը, խօսելով ազգային կրթութեան մեծ պէտքին և վանքի կողմէ այդ տեսակետով ցուցուած փոյթին մասին: Երկու ազգայիններ, Պ. Պ. Ետայեան և Մանուհիկան, շնորհակալութեան խօսք ուղղեցին ի դէմս Ս. Աթոռոյ և Ս. Պատրիարքին, և սիրով ցոյց տուին յանձնառութիւն՝ նորաշինուելիք վարժարանին ներքին կանաւորատան ժողովուրդին հանդանակութեամբ հոգալու Օրհնութեամբ փակուեցաւ այս խմբուճը: Ս. Պատրիարք և վարդապետներ դարձան Երուսաղէմ:

#### ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՅԵՐՍՐԱՎ

Դշ. 14 Սեպտ. ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Հօրշ. Տ. Տ. Սերովբէ և Հայրիկ վարդապետաց, առաւտուն մեկնեցաւ Տրեբրիա, այցելելու աշակերտութեան միւս կէտին, որ կու շարքա առաջ գացած էր Գալիլիա: Ճիշդ կէսօրին հասաւ Տրեբրական ծովին ափը: Իրիկնադէմին այցելեց քիչ մը անդին, ծովկարի եօնալիքի սնկերու մեծ անտառը, ուր իրիկը Տեսչին՝ Տ. Եղիէ վարդապետի հետ (այժմու Գահակալը Ս. Աթոռոյս — Մ. Ո.) դեռ նոր հասած և օթեան կազմած էին սարկաւադներէն վեցը և տասը աշակերտներ: Երբ Ս. Պատրիարքը և ընկերացող վարդապետները ժամանեցին իրենց մօտ, ամէնքը նուիրական ծովկան առջև շարուած՝ երգեցին Ն. Ենթարաւոյ ճամբարայն օրինակի, առաքելոցն Քրիստոսի, որք ի ծովէն Տրեբրական ի յերկնայինն կոչեցան: Ն. Ամեն. զգածուած սրտիւ խօսեցաւ անոնց և յորդորեց զիրենք յիշել ձկնորսի նուակներուն և ուակներուն այդ պարզուկ ուրտաին մէջ փառուորուած հոգևոր կոչումի մեծ դասը և համագրաւուելի անոր խորհուրդով: Մօտակայ Գերմանական օթեանին մէջ գիշերելէ վերջ, յաջորդ օրն ամբողջ Սրբօգան Հայրը անցուց անտառին մէջ, աշակերտներուն հետ, և իրիկուան դէմ դարձաւ Երուսաղէմ: — Նոյն օրը, Տ. Տիրան վրդ. մեկնեցաւ Տրեբրիա:

(«Սիռն», 1937, ԺԱ. Քարի, Հոկտեմբեր, ԹԻԼ 10, էջ 333):